



Ո Ւ Խ Տ Ա Ի Ո Ր



(Ղ. Ե. Գ. Կ. Ն. Զ. Մ.)

Ա

Եին ժամանակը, չը գիտեմ՝ թէ ուր,
 Հովիւ էր ապրում՝ անունը Ծա-
 տուր:
 Հեռու աշխարհի ճովս վայելքներից,
 Հեռու մարդկային բոլոր մեղքե-
 րից,
 Նա գիշեր-ցերեկ աղօթք էր անում,
 Պասով ու ծոմով Աստուծուն օրհ-
 նում.

Նա ուխտ էր արել գնալ անպատճառ
 Մուրը Երուսաղէմ՝ սրբազան աշխարհ՝
 Երկըրպագանել Զիրմին Յիսուսի,
 Ուխտը կատարել, դառնալ ժահտեսի:
 Բայց առանց փողի, առանց պաշարի,
 Խեղճը ինչ գնար ծայրը աշխարհի?
 Պապոնց տունը չէր, ուր խկոյն վազէր
 Ու կէս ժամից յետ շուտով տեղ հասնէր,
 Իսկ հարուստներից ում դարդն էր կտրել
 Աղբատ Ծափուրին փող տալ ու օգնել?

Թէ հարուստները աղքատին օգնեն,
 էլ ինչով իրանց վիզը հաստ ունեն?...
 էհ, Աստուած կ'օրհնի, բարեպաշտ Ծատուր,
 Միայն միշտ եղիր անբլծ ու մաքուր:

Բ

Իրանց փողերով հրկու մեծատուն
 Ձեռք էին բերել պատիւ ու անուն:
 Նրանք աղքատին խաբելու համար
 Ձեռնում էին անմեղ ու արդար,
 Ամենի աչքին թող էին փշում,
 Խեղճերի վերջին կռակը խլում:
 Սրանք էլ կամեցան Սուրբ երկիր գնալ,
 Երուսաղէմում մըղղըսի դռնալ,
 Որպէս զի «հաջի» տիտղոսով մեծարգ
 Միշտ ծածկեն իրանց գործքերը անարգ,
 Որ իրանց մարմնի կապոյտ դրոշմով՝
 Երուսաղէմի սուրբ նշաններով
 Ձեռնան արդար և աստուածավախ,
 Որ ծածկեն իրանց պիղծ հոգին խարդախ:
 Եւ ահա մի օր մեր մեծատուններ,
 Ոսկով լցնելով իրանց գրպաններ,
 Առան ուտեստի լիառատ պաշար,
 Հեծան ձիաներն, ընկան ճանապարհ:
 Մեր խեղճ Ծատուրն էլ իր ցուպը վերցրեց,
 Քաղցած ու սոված նրանց հետևեց:

Գ

Թէպէտ Ծատուրը ոտով էր գնում,
 Բայց ընկերներից նա յետ չէր մնում.—

Ինչ որ երկնառաք մի ոյժ գերբնական
 Առաջնորդում էր և օգնում նորան:
 Երբ օրը մթնեց, հասաւ գիշերը,
 Մի գիւղում իջան ուխտաւորները:
 Այստեղ մի հարուստ ընդ առաջ ելաւ,
 Մեծատուններին ապաստան տըլաւ,
 Ապա ներս մտաւ ու փակեց դուռը:
 Մ'նաց փողոցում մեր խեղճ Ծատուրը:
 Բայց ահա եկաւ մի բարի պառաւ,
 Ծատուրին կանչեց, իր տունը տարաւ:
 Պառաւն աղբատ էր, հիւանդ ու տրկար,
 Զ'ունէր ոչ ապրուստ, ոչ հացի պատառ:
 Քաղցած թոռները պառկած յատակին,
 «Հաց» էին կանչում, լալիս դառնագին:
 Թոռներից մէկը արդէն կիսամեռ
 Սովածութիւնից շունչը փչում էր,
 Իսկ միւս երեքը՝ դժգոյն ու նիհար՝
 Թաւալում էին, տանջւում չարաչար...



Բարի Ծատուրը՝ արցունքը աչքին՝
 Նայեց սովատանջ որբ մանուկներին,
 Յուսահատ տատին խըրախոյս կարդաց,
 Մահակն առաւ, իսկոյն դուրս գնաց:
 Զգոյշ քայլերով նա գիւղն անցաւ,
 Նայեց չորս կողմը ու դաշտը մտաւ:
 Խաղաղ գիշեր էր. լուսնեակը պայծառ
 Արծաթ-չղորները թափել էր աշխարհ:
 Ծատուրը չորեց, աղօթեց Տէրին,
 Որ քաւութիւն տայ նորա յանցանքին:
 Ապա մօտեցաւ հօտին կամացուկ,

Բռնեց մի ոչխար, շալակեց ծածուկ.
 Զգոյշ քայլերով գլուզ վերադարձաւ,
 Պառաւի տունը սուսուփուս մտաւ.
 Մի փոքր յետոյ դուրս եկաւ կամաց
 Եւ հարեանի մառանը գնաց.
 Այնտեղից առաւ մի քանի լաւաշ,
 Կրկին տուն մտաւ զգոյշ ու նաւաշ ¹⁾.
 Ոչխարը մորթեց, միսը խորովեց,
 Որբ մանուկներին նա կուշտ կերակրեց.

Ե

Եւ մեր կիսամեռ, քաղցած որբերը.
 Երբ կազդուրեցին իրանց ոյժերը,
 Այնժամ մօտեցան բարի Ծատուրին,
 Գոհունակութեամբ ձեռքը պաշեցին.
 Եւ մեր Ծատուրը ողբալով չոքեց.
 Դողդոջ ձեռքերը երկինքը պարզեց.
 «Տէր, ես կեանքումս մեղք չէի գործել
 Ծոմով, աղօթքով միշտ Քեզ եմ յիշել.
 Բայց այժմ ես Քեզ դաւաճանեցի
 Եւ սուրբ պատուէրդ ոտնատակ տրւի.
 Գողութիւն արի, ո՛վ Արդարադատ,
 Զեռքս պղծեցի, ձեռքս անարատ.
 Զայրացրի յաւէրժ գլխիս սուրբ երկին
 Ու հոգիս դարձրի դժոգքի թափին...
 Ես խեղճ որբերին փրկեցի մահից,
 Դու էլ ինձ փրկիր իմ ծանր մեղքից.
 Օ՛, աղաչում եմ, յանցանքս ներիր,
 Մեղապարտ հոգիս դժողքից փրկիր.

1) Կախաց:

Օ, քարեպուծ Տէր, գլծա ինձ վերայ,
Ներիր յանցանքս, խղճա ինձ, խղճա...»

Զ

Երբ առաւօտեան արեւը պայծառ
Ոսկեղօծիլ էր աշխարհը արար,
Հիւանդ պառաւը օրհնեց Ծատուրին,
Քարի երթ մաղթեց և օրհնեց ուղին.
«Քարով տեղ հասնիս, Սուրբ երկիր դնաս,
Ուխտդ կատարես, մահտեսի դառնաս.
Ինչպէս խղճացիր թողնելիս սոված,
Այնպէս էլ, որդի, խղճայ քեզ Աստուած.
Մնց ազատեցիր թողնելիս մահից,
Այնպէս էլ ինքդ ազատուես մեղքից.
Ծանր յանցանքիդ ու մեղքիդ նման
Քարութիւնդ էլ մեծ է, անսահման.
Թող Արարիչը գլծայ քեզ վերայ,
Մեղքդ մոռանայ ու քաւութիւն տայ.
Ծնկաչոք գնա Տիրոջ Տաճարը,
Արցունքով լուս Շիրիմի բարը,
Թող ողբդ հասնի, վերանայ երկին,
Որ քաւութիւն տայ Տէրը քո մեղքին.
Ես էլ մինչի մահ, քանի շունչ ունեմ,
Քո հոգու համար պիտի աղօթեմ...»

Է

Մեծատունները տնից դուրս եկան,
Հեծան ձիերը, ճանապարհ ընկան.
Նըրանց յետևից տխուր ու մռայլ
Գնում էր Ծատուր լուռ ու յամրաբայլ:

Արեւ վերից կրակ էր թափում,
 Լեռներ ու ձորեր այրում, շիկացնում:
 Եւ մեր Ծատուրին այժը գերբնական
 էլ չէր ուղեկցում, չէր օգնում նորան:
 Ձիււորները առաջ գնացին,
 Իսկ Ծատուր յողնեց ու նստեց քարին:
 Յանկարծ երկնքում մի ամպ երևաց.
 Ամպը՝ լողալով հանդարտ ու կամայ՝
 Եկաւ ու կանգնեց հովանու նման
 Մեր ուխտաւորի գլխի յանդիման:
 Հէնց որ Ծատուրը փոքր հովաքաւ,
 Քրտինքը սրբեց, Տէրին փառք տրւաւ —
 Իսկոյն թանձրացաւ ամպը մռայլեց,
 Սև քողի նման արիւր ծածկեց.
 Մթնեց երկինքը, խաւարեց իսպառ,
 Թանձր մշուշը պատեց ողջ աշխարհ:

Ը

Յանկարծ սև ամպը ճեղքուեց, որոտաց-
 Եւ նորա միջից կայծակը շողաց.
 Բոցափայլ գիծը կոտրուեց, փայլեց,
 Իսկոյն սլացաւ Ծատուրին շանթեց.
 Լեռներ ու ձորեր թնդացին ուժգին,
 Չանթահար Ծատուր փռուեցաւ դետին.
 «Աստուած ինձ պատժեց իմ մեղքի համար,
 Ահ, մնաս բարով, դու ունայն աշխարհ...»
 Քամին բարձրացաւ, ամպերը քչեց,
 Արևն էլ նորից իր ջահը վառեց:
 Բոլոր ամպերը մի կողմ կիտուեցին,
 Ոսկեղօծուելով սանդուղք կազմեցին:
 Եւ սանդուղտների գլխին երևաց

Տիրոջ Հրեշտակը՝ թևերը բացած,
 Եւ նորա առաջ ահա բացուեցան
 Հրաշալիքները չրեղ ընուլթեան.
 Լեռներ ու ձորեր, դաշտ, մարգագետին
 Նորա ոտքի տակ տարածուել էին.
 Իր շուրջը նայեց նա վեհ հայեացքով,
 Իջաւ երկիրը ոսկէ սանդուղքով:



Եւ հեղ ու հանդարտ նա առաջ գնաց,
 Կանգնեց շանթահար Ծատուրի դիմաց.
 «Ուշքի եկ, Ծատուր, վեր կաց ըսթափուիր,
 Աստուած ազօթքիդ եղաւ ունկնդիր.
 Մահից փրկեցիր դու խեղճ որբերին,
 Աստուած էլ ներում տուաւ քո մեղքին.
 Մեղքդ փոխուեցաւ առարկնութեան,
 Եւ արժանացար դու արքայութեան,
 Ոսկէ տառերով դրախտի ճակատին
 Գովասանք գրուեց քո արած գործքին:
 Սուրբ Երուսաղէմ դու էլ մի գնար,
 Առանց գնալու մահտեսի դարձար.
 Ուխտըդ կատարուեց, տուն վերադարձիր,
 Տիրոջ անունը սրբութեամբ յիշիր.
 Իսկ ընկերներդ թող առաջ գնան,
 Նննգամիտ սրտով մահտեսի դառնան.
 Ինչքան որ կ'ուզեն, թող խաբեն մարդկանց,
 Աստուած խստօրէն կը պատժի նրանց...
 Դէ, վերկաց, Ծատուր, մարմինդ գննիր,
 Ապա յետ գնա, տուն վերադարձիր...»

Ժ

Եւ Հրեշտակը երկինք վերացաւ,
 Ամպերի միջին իսկոյն չրացաւ:
 Վերկացաւ Ծառուր ու ոտքի կանգնեց,
 Եւ ուշի ուշով մարմինը զննեց.
 Զննեց կայծակի տեղերը շանթած
 Ու տեսաւ այնտեղ նախշած, նկարած
 Երուսաղէմի սուրբ նշանները,
 Սրբազան երկրի կապոյտ դրոշմները.
 Տեսաւ իւր սրտին նկարը Խաչի
 (Արդէն դարձել էր կատարեալ հաջի),
 Տեսաւ նա տպած աջ ձեռքի վերայ
 Չքնաղ սլատկերը սուրբ Աստուածածնայ:
 Երկիւղածութեամբ Ծառուրը չորեց,
 Գոհացաւ Տէրին, նորան փառք տուեց:
 Ապա վեր կացաւ, իր ցուպն առաւ,
 Դէպի հայրենիք ճանապարհ ընկաւ:

ԺԱ

Մեծատունները երբ վերադարձան,
 Բոլոր անցածը մէկ մէկ իմացան—
 Իրանց վատ կեանքը [Թողին սարսափած,
 Թողին նենգութեան ուղին անարգուած.
 Իրանց գանձերը շալակն առին
 Եւ նուիրեցին որբ մանուկներին.
 Ապա քաշուելով անապատները,
 Սկսան քաւել իրանց մեղքերը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ